



**HEAD
START**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ HEAD START

ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՍ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ ԱՅՍՕՐ:

Ձեր շրջակայքում Head Start ծրագրեր գտնելու
համար զանգահարեք
1-877-PRE-K-KID (1-877-773-5543)
հեռախոսահամարով
www.prekkid.org



**HEAD START-Ի ՄԻՋՈՑՈՎ
ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱՂԻՔԻ
ԲՈՂՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մտացեր ծառայությունները և աջակցությունը
սովորական դասասնայակներում

Զարգացրեք սովորելու և շփվելու կարողությունները,
որոնք անհրաժեշտ են դպրոցի համար

Շփվեք բոլոր աշակերտների հետ՝ հատուկ կարիքներ
ունեցող երեխաների հանդեպ դրական վերաբերմունք
զարգացնելու համար

Կապ հաստատեք ծառայությունների հետ՝ տեղական
դպրոցական շրջանների, տարածաշրջանային
կենտրոնների և համայնքային այլ
աղբյուրների միջոցով



Los Angeles County Office of Education

Serving Students • Supporting Communities • Leading Educators



HEAD START

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ Է ADMINISTRATION FOR CHILDREN AND FAMILIES,
DEPARTMENT OF HEALTH AND HUMAN SERVICES-Ի ԿՈՂՄԻՑ:

ՀԱՅՏՆԱԲԵՐԻՔԻ ՁԵՐ ԵՐԵՆԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ HEAD START-Ի ՄԻՋՈՑՈՎ

Head Start-ը և Early Head Start-ը՝ դրանք ծրագրեր են, որոնք օգնում են նորածնից մինչև հինգ տարեկան ցածր եկամուտ ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին: Ծրագրերը անվճար են: Head Start-ի միջոցով Ձեր երեխան կարող է ստանալ վաղ մանկական կրթություն, որը կօգնի նրան պատրաստվելու դպրոցի համար և հաջողության հասնելու այնտեղ, անգամ եթե նրանք հատուկ կարիքներ կամ լուրջ հաշմանդամություն ունեն: Կրթությունից և ընտանիքի ներգրավվածությունից մինչև առողջապահական և բարեկեցության ծառայությունների հասանելիություն, այն ներգրավվում է բոլոր ոլորտները, որոնք կօգնեն Ձեր երեխային հաջողության հասնելու համար:



HEAD START-Ը ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է՛

- 1 Ծառայություններ, որոնք երեխաներին օգնում են դրսևորելու իրենց ամբողջ ներուժը
- 2 Կրթական գործունեություն ներքին և արտաքին անվտանգ միջավայրերում
- 3 Առողջ կերակուր և նախուտեստներ
- 4 Անվճար կրթություն, սոցիալական և բժշկական հետազոտություն և ուղեգրեր բոլոր աշակերտների ընթացիկ խնամքի համար



- 5 Անվճար ծնողական դասեր և ծնողների աջակցություն
- 6 Բարձրակարգ վաղ կրթություն, որը Ձեր երեխային պատրաստում է դպրոցի համար
- 7 Ապացուցված վաղ միջամտության ռազմավարություն



Head Start-Ը ԲՈՎՈՐ ԵՐԵՆԱՆԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Head Start-ի ընթացքում Ձեր երեխան կսովորի և կաճի սովորական դասասենյակում՝ իր տարիքի այլ աշակերտների հետ մեկտեղ, մինչ կշարունակի հասնել իր Անհատականացված կրթական ծրագրի (Individualized Education Program, IEP) նպատակներին և խնդիրներին: Head Start-ը առաջարկում են բարեհամբույր, երեխային ուղղված միջավայր, որի հիմնական նպատակն է օգնել Ձեր երեխային սովորել հետևյալների միջոցով՝

- Դասարանային գործունեության հարմարեցում հատուկ կարիքներ ունեցող երեխաների կարիքներին
- Անձնակազմի շարունակական վերապատրաստում՝ խիստ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները հասկանալու համար
- Հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթություն՝ իրենց համար ամենամատչելի ձևով
- Ընտանիքի հետ տարվող աշխատանքներ՝ իրենց

Երեխաների մանկապարտեզ այցելելու համար անհրաժեշտ սովորելու, շփվելու և ֆիզիկական կարողությունները զարգացնելու հարցում օգնելու համար

- Երեխաների և ընտանիքի համար ծառայությունների համակարգման հարցում օգնություն
- Բոլորի համար անվտանգ դասասենյակների տրամադրում, որոնք կներառեն հատուկ կահույք, սարքավորումներ և նյութեր
- Երեխաներին առողջապահական, կրթական, ընտանեկան և համայնքային բոլոր ծառայությունների հասանելիության և տրամադրման ապահովում
- Որոշ դեպքերում, երեխաներին տանը տրամադրվող ծրագրերին մասնակցելու այլընտրանքի տրամադրում այն վայրերում, որտեղ այդ ծրագրերը առկա են:

ՀՈԳԱՏԱՐ, ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Մեր աշխատակազմը հանձն է առել տրամադրելու հասկացողություն, ընդունում և միջավայր՝ Ձեր երեխայի կրթության և հաջողության համար: Head Start-ի ուսուցիչները ունեն Վաղ մանկական կրթության կամ հարակից բնագավառի կրթական աստիճան: Յուրաքանչյուր գործակալություն հունի հաշմանդամների հատուկ նշանակված համակարգող, իսկ մեր անձնակազմը յուրաքանչյուր տարի անցնում է մասնագիտական վերապատրաստում՝ դասասենյակում հատուկ կարիքների աջակցման համար:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԲՈՋ ՀՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Երբ Դուք ցուցակագրվեք Head Start-ի համար, Դուք կստանաք ավելին, քան հատուկ կարիքներ ունեցող Ձեր երեխայի համար որակյալ կրթություն: Դուք և Ձեր ընտանիքը նույնպես կստանաք շարունակական կրթություն՝ Ձեր երեխայի շահերի պաշտպանը դառնալու հարցում օգնելու համար: Ձեզ համար նաև հասանելի կլինեն տեղեկատվական աղբյուրները, որոնք կբարելավեն Ձեր ընտանիքի բոլոր անդամների առողջությունը, կրթությունը և բարեկեցությունը: